ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ
«ԶԻՆՎՈՐԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ԵՎ ԶԻՆԾԱՌԱՅՈՂԻ ԿԱՐԳԱՎԻՃԱԿԻ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ ՕՐԵՆՔԻ ՆԱԽԱԳԾԻ

1. **Իրավական ակտի ընդունման անհրաժեշտությունը.**

«Զինվորական ծառայության և զինծառայողի կարգավիճակի մասին» օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին օրենքի նախագծի ընդունման անհրաժեշտությունը պայմանավորված է արդեն իսկ Շանհայ վարկանիշավորման ցանկի առաջին հինգ տասնյակի համալսարաններում սովորելու համար տարկետում ստացած քաղաքացիների գիտելիքները Հայաստանի Հանրապետությունում գիտության, տնտեսության, քաղաքացիական ծառայության և այլ ոլորտներում օգտագործելու հնարավորության ընձեռմամբ:

2. **Ընթացիկ իրավիճակը և խնդիրները.**

Գիտության և կրթության բնագավառներում նշանակալի նվաճումներ ունեցող քաղաքացիներին պարտադիր զինվորական ծառայության զորակոչից տարկետում տալու հետ կապված հարաբերությունները կարգավորվում են ՀՀ կառավարության 2018 թվականի ապրիլի 12-ի N 451-Ն որոշմամբ (այսուհետ՝ կարգ), որի հավելվածի 9.1-ին կետով որպես նվաճում է սահմանված աշխարհի լավագույն բարձրագույն ուսումնական հաստատությունների ակադեմիական վարկանիշավորման http://www.shanghairanking.com/# կայքի՝ պարտադիր զինվորական ծառայության զորակոչից տարկետում ստանալու համար դիմելու կամ դրան նախորդող տարվա համալսարանների ակադեմիական ընդհանուր (Academic Ranking of World Universities) ցանկի առաջին հինգ տասնյակում ընդգրկված հաստատություններում բակալավրի (դիպլոմավորված մասնագետի, ինտեգրացված)՝ ներառյալ տվյալ ուսումնական հաստատության նախապատրաստական ծրագրի մինչև մեկ տարի

ժամկետով ուսումնառությունը (եթե նախապատրաստական ծրագիրը չի համարվում ինքնուրույն հանրակրթական կամ միջին մասնագիտական ծրագրի մաս), մագիստրատուրայի, ասպիրանտուրայի և այլ կրթական ծրագրերով առկա ուսուցմամբ սովորելու հանգամանքը: 2018 թվականից նշված կարգը գործում է, և Շանհայի վարկանիշավորման ցանկում ընդգրկված բուհերում սովորելու համար տարկետում է արդեն իսկ ստացել է 650 քաղաքացի տարբեր կրթական աստիճաններով, որոնցից 570 քաղաքացի ներկա դրությամբ դեռ սովորում է և շարունակում է օգտվել տարկետման իրավունքից: Սակայն նշված քաղաքացիների Հայաստանի Հանրապետություն վերադարձ ապահովելու և նրանց ներուժը գիտության, տնտեսության, քաղաքացիական ծառայության և այլ ոլորտներում օգտագործելու գործիքակազմերը կատարելագործելու անհրաժեշտություն ունեն:

Այսօր մարդկային կապիտալի կառավարման, բարձրորակ մասնագետների արտահոսքը կանխելու և տնտեսության տարբեր ճյուղերում ներգրավելու հետ կապված առկա են մի շարք մարտահրավեր, մասնավորապես.

- երիտասարդ մասնագետների՝ IT, բժիշկներ, ինժեներներ և այլ ոլորտների մասնագետների այլ երկրներում աշխատելու համար մեկնելը բերում է աշխատուժի պակասի,
- արտագաղթում են ամենաշատ պոտենցիալ ունեցող կադրերը՝ որակյալ կրթություն ստացած, օտար լեզուների տիրապետող, միջազգային լավագույն փորձին ծանոթ:

3. Ակնկալվող արդյունքը.

Նախագծի ընդունմամբ պարտադիր զինվորական ծառայության զորակոչից տարկետում ստանալու նոր համակարգ կձևավորվի, որի միջոցով տարկետում կտրամադրվի աշխարհի լավագույն բարձրագույն ուսումնական հաստատությունների ակադեմիական վարկանիշավորման http://www.shanghairanking.com/# կայքի՝ Academic Ranking of World Universities

ցանկի առաջին հինգ տասնյակում ընդգրկված հաստատություններում բակալավրի (դիպլոմավորված մասնագետի, ինտեգրացված)՝ մագիստրատուրայի, ասպիրանտուրայի և այլ կրթական ծրագրերով առկա ուսուցմամբ սովորելու և Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից նշված ոլորտում և վայրում աշխատելու համար: Նշվածի արդյունքում տրամադրվող տարկետումները կունենան հստակ նպատակ և ուղղված կլինի մարդկային ներուժի գիտության, տնտեսության և այլ ոլորտներում օգտագործելուն: Հայաստանի Հանրապետություն վերադարձ ապահովելու և նրանց ներուժը գիտության, տնտեսության և այլ ոլորտներում օգտագործելու գործիքակազմերը կատարելագործելու նպատակով առաջարկվող փոփոխությունները կտարածվեն նաև Հայաստանի Հանրապետության կառավարության 2018 թվականի ապրիլի 12-ի N 451-Ն որոշման հավելվածի 9.1-ին կետով սահմանված նվաճումների հիման վրա պարտադիր զինվորական ծառայության զորակոչից տարկետում ստացած և ուսումը ավարտած քաղաքացիների վրա:

Մասնավորապես սույն օրենսդրական փոփոխությունից հետո համապատասխան ենթաօրենսդրական ակտերով սահմանվելու է, որ նշված հիմքով պարտադիր զինվորական ծառայության զորակոչից տարկետում ստացած և ուսումը ավարտած քաղաքացիներ որպես պարտավորություն են ունենալու Հայաստանի Հանրապետություն վերադառնալու և նախատեսվող կարգով աշխատելու, որի համար ևս զինվորական ծառայության զորակոչից տարկետում ստանալու և պարտադիր զինվորական ծառայությունից ազատվելու համակարգ կգործի: Համապատասխան փոփոխություններ են կատարվելու նաև Հայաստանի Հանրապետություն կառավարության 2019 թվականի փետրվարի 15-ի N 89-Ն որոշման մեջ, որով ևս սահմանվելու է, որ նշված հիմքով պարտադիր զինվորական ծառայության զորակոչից տարկետում ստացած քաղաքացին կարող է ազատվել պարտադիր զինվորական ծառայությունից միայն նախատեսվող կարգով արդեն աշխատելու համար տարկետում ստանալուց և սահմանված ժամկետներով

աշխատելուց հետո միայն: Սույն օրենսդրական փոփոխությունից հետո փոփոխություններ են կատարվելու նաև Հանրապետության կառավարության 2018 թվականի ապրիլի 12-ի N 451-Ն որոշման մեջ, որով հավելվածի 9.1-ին կետով սահմանված նվաճումների հիման վրա տարկետում այլևս չի տրամադրվի:

Համացանցում առկա բաց տվյալների ուսումնասիրության արդյունքում պարզ է դառնում, պետության կողմից աշխարհի առաջատար համալսարաններում մեկ մասնագետ պատրաստելը մեծ գումարներ են կազմում, մասնավորապես (ներառված չեն կեցության և այլ ծախսեր).

Մեկ մասնագետի վրա միջին ծախսերը՝ (բակալավրիատի 4 տարվա ընթացքում)			
Երկիր	Համալսարաններ (օրինակներ)	Ընդհանուր ծախսեր (4 տարի)	Տարեկան ծախս
US ԱՄՆ	Harvard, MIT, Stanford	**$250,000 – $350,000**	$60,000 – $90,000
GB Մեծ Բրիտանիա	Oxford, Cambridge	**$180,000 – $240,000**	$45,000 – $60,000
DE Գերմանիա	TUM, Heidelberg	**$35,000 – $60,000**	$9,000 – $15,000
CH Շվեյցարիա	ETH Zurich, EPFL	**$60,000 – $80,000**	$15,000 – $20,000
CN Չինաստան	Tsinghua, Peking University	**$25,000 – $50,000**	$6,000 – $12,000
FR Ֆրանսիա	Sorbonne, École Polytechnique	**$30,000 – $50,000**	$7,000 – $12,000
SE Շվեդիա	KTH, Lund University	**$35,000 – $60,000**	$9,000 – $15,000

Առաջարկվող տարկետման նոր համակարգով հնարավորություն է ընձեռնվում առանձ պետության կողմից ֆինանսական լրացուցիչ ներդրումների գիտության, տնտեսության, քաղաքացիական ծառայության և այլ ոլորտներում ներգրավել մասնագետների:

4. **Նախագծի մշակման գործընթացում ներգրավված ինստիտուտները և անձինք.**

Կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություն:

5. **«Կապը ռազմավարական փաստաթղթերի հետ. Հայաստանի վերափոխման ռազմավարություն 2050, Կառավարության 2021-2026թթ. ծրագիր, ոլորտային և/կամ այլ ռազմավարություններ».**

ՀՀ կառավարության որոշման նախագծի ընդունումը բխում է Հայաստանի մինչև 2050թ. վերափոխման ռազմավարության 1-ին «Կիրթ և կարողունակ քաղաքացի» ունենալու մեգանպատակից: